

1961



11-15
505 +


Հ Ա Ր Ի Բ Ե Ւ Ն Ք

Վ Ա Ն Ո Ր Ե Ւ Ց

Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Տ Ք

Կ Ա Զ Մ Ե Ց

Լ Ո Ւ Ս Ա Ն Կ Ա Ր Մ . Փ Ա Փ Ա Զ Ե Ա Ն Ց



Վ Ա Զ Ա Ր Զ Ա Պ Ա Տ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ Էջմիածնի


1890

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. Մ Ա Կ Ա Ր Ա Յ Ա .

ՎԵՀԱՓՈԽ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈԼԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



Եր առաջին գրքում խոստացել էինք, որ մեր հաւաքած աւերակների պատկերները մաս առ մաս գիրք կազմելով, հանդէս բերենք իբրև աղջի հնութիւններ, հաւատալով՝ որ ընդունելութիւն կգտնեն բանասէրներից, և յոյս էինք յայտնել առատաձեռն հայրենակցացս նիւթական քաջալերութեանց մասին, որով կարող լինէինք թէ այն ամեն հնութիւնները որ մեծ դժուարութիւններ յանձն առնելով հաւաքել ենք հրատարակել, և թէ սոյն մեծածախս գործի շարունակութիւնը առաջ տանել:

Հնորհակալ եմ այն յարգելի անձնաւորութիւններից, որ գնահատելով գործի արժանաւորութիւնը և նկատելով մի այսպիսի՝ — մեր ոյժից վեր ծանր գործի ձեռնարկութեան համարձակելնիս, առանց վարսնման ընդունել են գիրքը իբրև աղջի հնութիւնք և իբրև զարդ իւրեանց գրատանց համար:


Եր առաջին գրքում խոստացել էինք, որ մեր հաւաքած աւերակների պատկերները մաս առ մաս գիրք կազմելով,

“Սաև մեր խորին շնորհակալութիւնը կյայտնենք այն մեծայարդ պ. պ. ներին, որ բարեհաճել են մեզ պատուելու իւրեանց խրախուսական և համակրական նամակներով, որոնք խորհուրդ են տալիս առանց վըհատուելու շարունակել սոյն պիտանի գործը:

Մեր խնդիրն է որ այդ համակրանաց հետ, աշխատեն բարեկամք տարածել մեր աշխատութիւնքը, որով պատճառ կլինին թէ գործի շարունակութեանը և թէ մեր նեղութեանց թեթևանալուն, որովհետեւ մենք ոչինչ չենք խնայում և դորա մի ապացոյցն էլ սոյն երկրորդ գրքի պատկերներն աւելացնելն է:

Չնայելով որ առաջին գրքից միայն 100 օրինակի համար պատրաստութիւն ունէինք և կյուսայինք գորանք վաճառուելով միայն իւր ծախսն կարողանայր ծածկել, բայց ցաւօք յայտնումենք, որ դեռ 54 հատ է ծախուած, յուսանք մեր ազնիւ և բանիմաց աղգայիններէ, որ մեզ անմիտիթար և յուսահատ չեն թողնելու այսպիսի մի գործի ձեռնարկած լինելուա:

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ГИФЛНОВъ.



Արևածագ տու Եկ Կոշի № 342 /

Տակաչնիկ և Փփառելիք:

Խудож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисъ.

 Եր առաջին գրքի մէջ ցոյց տուինք միայն Աւանայ Ս. Ըստաբելոց վանքի դուռը և սորա արձանադրութիւնը, փոքրիկ համառօտ տեղեկութեամբ նորա միաբանութեան մասին: Եւելորդ չլինիր եթէ այդ պատմական չնաշխարհիկ Աւանայ լճի համար երկու խօսք աւելացնելով՝ նորա նկարներն եւ ցոյց տանք:

Աւանայ իսկական անունըն է այս է չան. Երբ Գրիգոր պարթև Ս. յարութեան տաճարը կանգնեցնելիս, տեղոյն անուանում է այս է վան, որ հետզետէ լեզուի աղաւանօք այս է վանը դառել է Աւան: Աւանին, Հայկացնեան Գեղամ իշխանը սորանից չորս հազար տարիներ առաջ տէր դառնալով և սորան շրջապատող նահանգին, ծաղկեցրոց հայ զիւղերով և աւաններով, որ վերջին ժամանակներս աւելի քան երեք հարիւր տարի առաջ թուրքերը իրենց աւերիչ արշաւանքներով քանդեցին աւանները, զիւղերը և հայոց վանքերը նահանգի ու ջարդեցին միջի հայերին տիրապետելով նորա բոլորին. սոյն բարբարոսութիւնը տեսեց մինչև այն ժամանակ, երբ Ռուսաց մեծագոր տերութիւնը տիրապետեց այս հողերին և վերջութիւնը տիրապետեց այս հողերին օրերին:

Լիճը կամ ինչպէս անուանվում է Աւանայ ծովը, գտնվում է վեց հազար ոտնաչափից աւելի բարձրութեան վրայ, ծովի երկարութիւնն է վաթսուն վերստից քիչ աւել, և լայնութիւնը չորսից մինչև քսան և վեց վերստի համարում է, որոյ բոլորտիքը զիւղերով շրջապատած է իւրեանց մէջ ունենալով հայ վանքերի աւերակներ ու հնութիւններ. ծովի հիւսիս-արևմտեան ափի մօտիկ մի վերստ հեռաւորութեան վրայ Աղզին է, ուր տեղաւորուած է հոչակաւոր Աւանայ վանքերը և իւր միաբանութիւնը:

Ինչպէս ասացինք Աւանայ ափերում, չորս բոլորտիքը աւաններ և զիւղեր են, որոնցից մի քանիսը Վալականների մեծ մասը թուրքերի, իսկ հարաւային և արևելեան եզերքներում լաւ արօտատեղեք և զիւղօրայք, որ այս տեղերը հայերը նորից սկսել են վերջի ժամանակներում բնակութիւններ հաստատել, գաղթած Օսմանեան երկրից Հին-Բայյազիտի և սորա շրջանակներից, այս տեղերը ապահով ապրում են, ինչպիսի են Օրդաբելու, Կոր-Բայյազիտ, Փաշա-քենտ, Պուլ-ալի, Կարադուզ, Քեսեճուք, Երանոս, Հաթամ-խան, Թաղա-քենտ, Վալի-աղալու, Քեօլ Շակ-քար,


ներքին և վերին կօթա զիւղը (այժմ՝ ներքին և վերին Ատինաման), վերին և ներքին Վարանլուխ գիւղերը, Օօլա-խաչ, (այս անունը առնուած է այն Երկայն խաչեց, որ կանգնեցրած է այստեղինն արշաչափ բարձրութեամբ Երկու արշաչափ էլ լայնութեամբ միապաղաղ քարից, որոյ վրայ ոչ այնչափ գեղեցիկ քանդակուած նկար կայ)՝ Երկար լինելուն զւա են անուանում, որ կնշանակէ Երկայն, իսկ ուրիշները մեկնում են զօլաբառը զօլաբառը, մենք առաջինը գտնում ենք հաւանական—յետոյ գալիս է Վրխ-Բուլախ, Օաղալու, Բասար-գեաչար, ևն, կան սորանց մէջ տեղերը Երբեմն աննշան թուրքի գիւղեր 20—30 տնից բաղկացած Օրդարլուի մօտերքը, որ հինժամանակից թուրք են եղել և այնպէս էլ մնացել, կայ Յօհանայ վանքի տեղը, որ Այրի վանք էլ են կոչում, զոր քիչ յետոյ գնալու ենք տեսնելու, բայց այժըմ դիտենք Յևանայ կղզու և լճի գեղեցկութիւնը, որ ամեն ճանապարհորդի հիացնում է։

Չիբուխլի 180 տնւոր հայաբնակ գիւղի միջով անցնելով, ճանապարհը շարունակվում է ուղիղ լճի ափով և հասնում է փոքրիկ՝ Երեսուն տուն հայաբնակ Յամաքաբերդ անունով գիւղը, ճիշտ ծովակիս եղթին զետեղուած։ Վանքը կամ կղզին

մտնել ցանկացողը պէտք է իջնէ այս տեղ ուղղակի վանատունը, որ գեղեցիկ գիրքի վրայ—հրուանգանի մը ծայրին—վայելու չինութիւն է բոլորաիքը ծառաստանով, մի քանի սենեակներից բաղկացած։ այս տեղ ամսոնային ժամանակները մնում է վանքից մի աբեղայ, որ ընդունում է ուխտաւորներին ու Ճանապարհ զնում դէպի կղզին, և մի ուրիշ ծերունի, որ հսկում է միայն վանքի դրսի տնտեսութեանը։ Կարելի է և խճուղիի ճանապարհի վրայ կղզու հենց դէմ ու դէմը Յամաքաբերդին չհասած Յաշտոցներ ասուած սարի ստորոտիցը բարձր ձայն տալով և կամ ատրճանակի արձակմամբ իմաց տալ և կղզիից լելով ձայնին, հասցնում են նաւակ ու տանում են վանքը ճանապարհորդին կամ ուխտաւորին։

Այս ծովակի վրայ բոլոր հաղորդակցութիւն և Երթեւեկութիւն լինում են նաւակներով, որոյ ձեռք №—342 նկարում տեսնվում է, որ կղզուց դուրս է գալիս, սորանցից վանքն ունի Երեք հատ, որոց մին մեծ է և տեղաւորում է իւր մէջ մօտ քառասուն, յիսուն մարդ, նայելով եղանակին՝ կամ թիավարում են և կամ առագաստ բաց անում, թիավարող չորս մշակներ միշտ պահում է վանքը։ Նոյնպէս ուրանով են որսում ծովից դուրս եկած ձուկը։

ФОТОГРАФІЯ



Худож.-лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.



1926 № 342

ПОКУПЧИК И ФИФИЧЕВ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ՍԵՒԱՆԱՅ ԿՂԶԻՆ № 341

Չանազան համեղ ձկներ են լինում մինչ տասն և երկու տեսակի, որոնցից գլխաւորը կոչվում է նշանայն—կը, որն որ առհասարակ մեծ քանակութեամբ բռնվում է սեպ" 15ից սկսեալ մինչ ապրելի վերջերը:

Երբ կղզուն մօտենում էք արդէն ձեր առաջիկովում է տեսարանը բոլորովին գեղեցիկ և զուարձալի, կղզու հիւսիսային և արևմտեան կողմի եզերքի երկարութեանց մէկ ծայրից մինչև միւսը բնկած է սաղարթախիտ ուռի և բարդի ծառեր, որոնք կազմում են զուարձալի և պատուական ձեմելիք կամ մի զբոսատեղի:


Կղզու մնացեալ մասն է ձուաձև մի սարակատար՝ տեղ տեղ թուփերով և խոտերով ծածկուած. իսկ հարաւային և արևելեան կողմերը, սեպաձև ժայռեր, որ շեշտակի իջնում է լճի մէջ:

Կաւակից դուրս գալով նոյն վերոյիշեալ ծառաստանի միջով անցնում ու մտնում էք պարսպապատ դռնից վանքի բակը, որոյ երկու կողմերում (արևմտեան և հիւսիսային—) ուխտաւորների համար սենեակներ կան շինուած հանգստանալու և գիշերելու ամեն պարագաներով պատրաստ, եթէ դռնից ներս մտնելիս մտիկ տանք մեղ յատեթէ դռնից ներս մտնելիս մտիկ տանք մեղ յատ-

կացրած սենեակից կղզու զիրքի վրայ, ձեր առաջբացվում է № 341 նկարի տեսարանը. բակի արևելեան կողմը հին աւերակ մնացած մատուռը, դէմու դէմը Զիթախեանցներից վերջէն նորոգուած աստուածածնայ եկեղեցին իւր փայտէ զանդակատնով, որ ինչպէս յայտնի է միաբանութիւնը այս տեղ է կատարում ժամերգութիւնը օրը չորս անգամ, սորտ հարաւային կողմը եկեղեցւոյ կից երկայն երկու շարքի վրայ մի մութ միջանցքով, մի հարկանի կաւաշէն, խոնաւ ու տգեղ փոքրիկ խրցիկներ միաբանների համար, մի մի փոքրիկ լուսամուտներով, նաև սեղանատունը, մառանը, ամբարը և լն:

Աենեակներից երկուսը յատկացրած են վանքի թանգարանի համար, որոց միոյն մէջ կայ մօտ 200 ձեռագիր և 400ի չափ տպուած գրքեր, լստ մեծի մասին կրօնական բովանդակութեամբ, միւսում եկեղեցական զգեստներ, զարդեր, խաչեր, մասունքներ և լն. ի միջի այլոց կայ աւանդութեամբ Եղոտ երկաթի դրօշի խաչը, որ ցողի վրայ ամրացնելու յարմարութիւնն ունենալով ամենայն տարի մի անգամ շրջեցնում են ամբողջ գաւառում, որով բաւական փող, ոչխար և լն. հաւաքում են ժողովրդից:

ФОТОГРАФІЯ



Худож.-лит. Р. Шахбазянца въ Гифлисѣ.



ԱՐԿԱՆԻՉԻՐ Ա. ՓԱՓԱՔԵՑ:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлис.

Այս մի հասարակ երկաթէ խաչ է և ասվում է Ա. Նշան, որի կեղրոնում ամրացրած կայ կենաց փայտի մասունքից: Առանից վերև երեւում են կղզու գագաթին գտնուած երկու վանքերը:


Կղզու վերևը բարձրանալիս ճանապարհների վրայ մի քանի տեղեր կանգնեցրած կան խաչքարեր. երբ արդէն վերի երկու հին վանքերի առաջ կհասնենք, կրկին այստեղ տեսարանը փոխվում է, սքանչելի պատկեր է ներկայանում, ծովակի կապուտակ վճիտ ջրերը փոքրիկ ալիքներ կազմելով գալիս խրժանակ ցածրը ժայռերին, որոնց բարակ ձայները բարձրից անուշ լսվում են, նոյնպէս օդի մաքրութիւնը, աւելի և աւելի զգալի է լինում, այս տեղ մի վերին աստիճանի առողջարար ամարանոցի տեղ է, ամառը հանգստանալ, կազդուրուիլ, թարմանալ ցանկացողների համար. սա ընութեան անհուն գեղեցկութեան մի կատարելատիպն է:

Կղզու շրջապատ տարածութիւնը, նայելով Տըփխիսեցի Գուլասպեանց Զաքարիա եպիսկոպոսի գրուածքին 2000 պարոկական գաղ կամ երկու ուսական վերստ է:

Կղզու վերևի վանքերի մին Ծռաքելոց վանք է կոչվում, որոյ հարաւային կողմի սիրուն փորագրեալ դուռը արդէն յայտնի է մեր առաջին գրքից, իսկ միւսը Ա. Ստեփաննոս անունով, այստեղի տեսարանը բացի երկու վանքերի և սոցա կողքերին գտնուած հին ժամանակի շինութեանց հետքերի մնացած աւերակներից, (որ մի ժամանակ միաբանութիւնը այս առողջարար տեղումն է եղել բնակուելիս) — նաև պատկերացնում է տեսանողի առաջ սիրուն ծովակը, եղերքի ունեցած ծոցերը և հրուանդանները ուր այս առաջին լեզուակի վրայ զետեղուած է Յամաքաբերդի վանատունը:

Այս վերևի եկեղեցիներում տարին միայն մի անգամ է կատարվում եկեղեցական արարողութիւն. վանքը յաճախ ունենում է հիւրեր, Եւրոպացի, Ուռու, Հայ և մասնաւոր ուխտաւորներ միշտ. բայց տարին երկու անգամ Ծստուածածնի և Ա. արդավառի տօնի օրերին մեծ բազմութիւն է լեբցվում այստեղ շրջակայ և հեռաւոր տեղերից այնպէս, որ հարկադրուած են լինում ամբողջ ընտանիքներ բացօթեայ գիշերելու մի քանի օրեր:

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛИСЪ.



№ 248 ՀԱՅԻ ՅՈԶԱԿԱՑ ՎԱՐԴ ԿՈՒՄ ԱՅՐԻ ՎԱՐԴ. (ԽԵՂԱՔԻ ՔՈՒՆԻՔԱՆԻ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. Փ. Ֆ. Ա. Զ. Ե. Ա. Յ.

Խ. Ջ. - Լ. Ռ. Շահբազյանց և Պ. Թիֆլիս.

Ենօվկա գիւղից թէքուելով դէպի ծովի
հարաւային կողմը և մօտակայ Օրդաքլու-
ին անունը (Պարտակ-) հայաբնակ գիւղի միջից անց-
նելով մինչև քսան երկու վերստաչափ տեղ գալիս
ենք քառասուն տնւոր թուրքի մի գիւղ, որոյ
ծայրին՝ ուղիղ ծովեղեքում ապառաժների վրայ
հաստատուած է սոյն Հայր Յօհանայ վանքը, եր-
բեմն և մարդ աղաւնեաց, որ թուրքերը Կյրի-վանք
են կոչում:

Այս այստեղ ճանապարհը շատ վատ է բու-
լորովին քարքարոտ լինելուն համար, համարեայ
ոչ մի արտ, պարտէզ, ծառ կամ կանաչ խո-
տի երես չէ տեսնվում, այլ ամենայն տեղ քարա-
կոյտներ, կարծէք անձրեսի տեղ քար թափուած
լինի երկնքից:

Դանակարչի վրայ կան մի քանի աւերակներ
ծովի եղերքներում, որոց մին Օրդաքլու գիւղից
քիչ հեռուն է գտնվում, միայն սեղանի կամարը և
հիւսիսային պատի մի մասը մնացած է կիսակործան.
Քիչ հեռու մի վանք ևս կայ Հաճի-մուխան թուրքի
գիւղում, սորան ևս արևելեան կողմի պատը միայն
4—5 արշնաչափ բարձրութեամբ մնացած է, հարա-

ւային և հիւսիսային պատերը կիսով մնացած, իսկ
արևմտեան կողմինը բոլորովին կործանուած.
թուրքերը այս տեղ իրենց համար գոմատեղի են շի-
նած և խոտ են դարսել, դարձեալ սոցանից քիչ
հեռու ծովի ափում մի հրուանդանի ծայրին, կան
քայքայուած շինութիւններ և խաչաքարեր, գուցէ
այս ևս լինի վանքի տեղ. բայց ոչ մի բան չի կա-
րելի իմանալ, միայն թուրքերը Դըզըլ—զարապա
են անուանում սորան, երևի շին գիւղատեղ կամ
վանքատեղ է եղել մի ժամանակ, որ նոյնպէս վեր-
ջերս թուրքերի բարբարոսով թեանց զո՞չ է եղած:

Յօհանայ վանքի երեք՝ այսինքն արևելեան, Տիւ-
սիսային և Հարաւային կողմերը ծովով պատած է,
դիրքը գտնվում է մի սուր հրուանդանի ծայրին, ուր
վանքը սեպաձև ժայռերի վրայ հաստատուած է,
վանքի շինութիւնը կազմուած է կարմիր և խառն
սրբատաշ քարերով, ձեւը ութ անկիւնանի, մի-
մեանց մէջ երկու եկեղեցիներից բաղկացած, որոյ
մին կարելի է համարել գաւիթ. Պատարագ մատու-
ցանելու սեղանը անտեսանելի է լինում ժողովար-
դից, որովհետեւ պատով ծածկուած է մէջտեղից,
որոյ հարաւային կողմից մի դռնով մտնվում է ներս՝



Ժամարար քահանան պատարագ մատուցանելու, բայց այժմ փոխանակ սորան աղաւնիներն իւրեանց ու ուներն են երգում. այս ձեփի եկեղեցւոյ շինութիւն հազիւ մի քանիսն կլինի, որ տեսանք, որոց մինն այս է:

Վանքի ներսը բոլորովիմք ամբողջ է, չունի ոչ ինչ արձանագրութիւն շինութեան կամ նորոգութեան վերաբերեալ. սակայն երևոյթից յայտնի է, որ շատ հին ժամանակի գործ է. եկեղեցւոյ արտաքին ձեւը ինչպէս նկարից երևում է, ունի երկու ցածր գմբեթներ, որոց մին վերևսից քիչ խոնարհուած է. արևմտեան կողմից ունի մի դռւու, որոյ կողքին կանգնեցրած կայ մի խաչաքար նոյնպէս անարձանագիր, հարաւային կողմից մի փոքրիկ դռւու ևս ունի, որ ուղղակի ծովի առաջն է, այնպէս՝ որ եկեղեցւոյ ներսից դէպի դուրս նայելիս ծովի ահագին լայնութեան կողմը սիրուն պատկեր է ներկայացնում, բայց դունից դուրս չի կարելի ենել, որովհետև տեղ չկայ ոտք դնելու, ուղիղ պատի նման ժայռը իջած է մինչև ծովը, եկեղեցուց 60—70 քայլաչափ հեռի—ի հարկէ արևմտեան կողմը, կան և երևում են բոլորակ ջր-

հորի նման քարից հիւսուած լայն փոսեր, չե իմացվում թէ ի՞նչ են, որովհետև քարերով լեցուած են, այսպէս մի քանիսներն կան որոց լայնութիւնները կլինին 5—6 արշին, նոյնպէս քառամկիւնի շինուածքներ դարձեալ քարերով լիքը միայն $1\frac{1}{2}$ —2 արշնաչափ բարձրութեամբ պատերն են երեսում, սոքա կարող էին լինել սենեակներ, ինչպէս Յ. Շահիսաթունեանն կարծում է:

Հայր Յօհանայ վանքից Ճանապարհը տանում է դէպի Կոր-Բայազիտ, ուր հետզիւտէ ծովից հեռանալով բարձրանում է դէպի սարի կողմը տակաւ առ տակաւ քարեր և քարակոյտներից ազատվում է. Էլ սկսում է Գեղարքունուոյ արգասաբեր ընդարձակ հողերը, ծաղկաւէտ դաշտերը, հովիտները, հօտերի արօտատեղիները, ցորենի, դարու, կտաւատի ևն. արտերը. որոնք իրենց գլուխնին խոնարհեցրած սուր մանգաղին են սպասում. հեռանալով ծովի տեսութիւնից և զրկուելով նորա չքնաղ տեսարանից մօտ 7 վերստից արդէն երևում է ձեր առաջ կաւաշէն տներով մի մեծ քաղաք, որն որ Կոր-Բայազիտն է:




26-251 ՀՈՎԱՆՆԱՎԱՆԿ Ա. ԱՅՏՈՒՄ ԽՈՎԻ ՇԵՎ. (ԳԵՂԱՐՔՈՒՆԻՒՑ)

ՀԵՒԱՆԿԱՐ Ա. ՓԱՓԱՉԵԱՆ:


ԽԱՋ. - ԼԻ. Ռ. ՇԱԽԵԶՅԱՆ Յ. ԹԻՓԼԻՆԸ.

ФОТОГРАФІЯ




Худож.-лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ФОТОГРАФІЯ



Худож.-лит. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛИСЪ.



№ 249 ԹԱՆԴԱՐԻՆ ԿՈՐ - ԲԱՅԱԶԻՑՈՒ

Պահանջման և Փառաւութեան:

Худож. Лит. Р. Шахбазянца въ Тифлисъ.

Որ-Ռայազիտը կամ ինչպէս անուանում
են տեղացիք Դեաւառ, գտնվում է Աևա-
նայ արևմտակողմը ծովեղից 6 վերատ հեռու մի նեղ
հովտիկում, գետի ափին և ուղիղ երեսուն վերատ
Ալենովկայ ռուս աւանի փոստային իջևանից:

Ինչպէս ասացինք քաղաքիս տներն կաւաշէն
են, բոլորը խառն հրաբխային կարմիր ու սև քա-
րերով, տափարակ կտուրներով, կան և երբեմն
երկյարկանի տներ էլ:

Քաղաքը ունի իւր մէջ երկու հայոց եկեղեցի.
Մինը հին է լայնանիստ շինուածով ու ընդարձակ.
Նոյնպէս կաւաշէն կազմուածքով, բայց տձեւ և
ներսը բոլորովին մուժը է, մի քանի փոքրիկ լու-
սամուտներ ունենալու պատճառաւ: Սոյն եկեղեց-
ւոյ բագումն է և հայոց ծխական երկսեռ դպրոցը,
աշակերտաց և աշակերտուհեաց թիւը քիչ են հա-
մեմատելով քաղաքի 1500 տնոր բնակիչների
թւոյն հետ:

Քաղաքիս բնակիչները բացի 20 տուն ռուս և
մի տուն քուրթից բոլորը հայ են և գաղթական-
ներ են Հին-Ռայազիտից և սորա շրջականերից

1828 ից: Զնայելով քաղաքի բարձր լեռնային մա-
քուր և առողջարար օդին և սառնորակ աղբիւր-
ների ջրոյն, որ անման են իրենց պարզութեամբ,
դարձեալ բնակչաց մեծ մասը աչքացաւի հիւան-
դութեամբ վարակուած է, բացառութիւն են կաղ-
մում շատ քչերից մի քանիսը:

Ոյն գաղթականներն են, որ բերել են իւրեանց
հետ հայրենիքի եկեղեցական զարդերից, մասունք-
ներից հնագոյնները, որն որ սոյն վերոյիշեալ եկե-
ղեցւոյ պահարաններից մինում տեղաւորուած են:
Կան մագաղաթի վրայ ձեռագիր աւետարան սի-
րուն և հիանալի ոսկեզօծ նկարներով, սրբոց մա-
սունքներ, ոսկեթել բանուածքով սաղաւարտ ու
վակաս 180 տարուայ գործ, մասունքների մէջ
գտնվում է սրբոյն Գէորգայ զօրավարի մասունքը,
որ տեղաւորուած է արծաթապատ փոքրիկ աւե-
տարանի ձեւ տուփի մէջ. Ս. Կենաց փայտ
և լն:


Ոյն սրբութեանց միշտ ուխտի են գալիս թէ
մօտակայ և թէ հեռաւոր տեղերից, որոյ ար-
դիւնքը եկեղեցւոյ ուսումնարանին է յատկացրած.

սոյն մասունքները երբեմն մասնաւոր անձանց մօտ և եկեղեցիներում մնացած է եղել, որ երջանկայիշատակ Աշտարակեցի Սերակ կաթուղիկոսը հաւաքել տուել է աստ պահուելու և ուսումնարանին արդիւնք լինելու համար, սորանցից շատեր էլ կան եղել, որ գորանով տարին բաւականին արդիւնք տալիս է եղել ուսումնարանին, բայց վերջի ժամանակներս նոյն սրբութեանց և մասսանց տէրերը խնդրամատոյց են լինում հոգեորիշխանութեան և պահանջում են, որ իւրեանց գիւղերի ուսումնարանների համար յետ դարձնուին նոյն սրբութիւններն, որոց ուշադրութիւն է դարձնում հանգուցեալ Գէորգ կաթուղիկոսը և թոյլ է տալիս վերադարձնելու տէրերին, այսպիսիներից մէկը տեսանք Առողջուզ գիւղում Յովհաննէս Գէորգեան անունով մի անձի տանը. քա-

ռաթե մի խաչ Ա. Աշան անունով և ձեռագիր մի աւետարան, որոնք բաւական ուխտաւորներ են ունենում:

Քաղաքիս մէջ կայ մի այլ եկեղեցի, որ նորոգուած է 1884 թուականներին քարուկիր և հաստատուն վեց սիւների վրայ կառուցուած, սոյն երկու եկեղեցիք ևս առանց կաթուղիկէի են, միայն փոքրիկ զանգակատուն ունին. այստեղ հընութեանց վերաբերեալ երեսելի մի բան չկայ. միայն քաղաքի արևելահիւսիսային կողմը բարձր քարափի վրայ գերեզմանատունն է, ուր խաչաքարեր շատ կան, որոց նկարը ցոյց տալու ոչ այնքան արժանի, խաչաքարերից շատերն էլ տեղափոխել են հին եկեղեցւոյ յատակը ծածկելու, փոխանակ Առողջուզ գարահանգից բերելու:

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛИСІ.



ՀԱՐՍԱՆԿԻՐ Մ. ՓԱՓԱՉԵԱՑ:

Խաջ. - Լիտ. Բ. Շահբազյան և Տիգլիս.

Որ - Բայազիտու արուարձաններից մինն է Փաշա - քենտ ասուած գիւղը, հին անունը ունեն, որ քաղաքի հարաւ - արևմտեան կողմն է ընկնում երկու և կէս վերստ հեռու գեաւառից, բոլորովին հայ բնակիչներով, աղքատ գիւղականներ, որոնք պարապում են հողագործութեամք և անամնապահութեամք:

Գիւղի միջին կայ նշանաւոր եկեղեցի թագածե գմբեթով, մէջը անսիւն և երեք խորաններով. բայց այս նորոգութիւն է ունեցել քաղթականներից, առանց արձանագրութեան է, ոչ հին շինութեանը և ոչ նորոգութեանը մնախն բան չկարացինք տեղեկանալ. միայն եթէ հաւատանք հայր Շահսամթունեանի դրութեան, պէտք է ընդունենք մօտ երեք հարիւր երեսուն և ինն տարուայ շինութիւն, ինչպէս ինքը Շահսամթունեանն մի արձանագրութեան քար գտել և այսպէս էլ զըրուած է եղել «Կամաւն Աստուծոյ Տատլուղանսդու պարոն Դաւթին կենաց կից Փիր համզայ աղին՝ որ նորոգեցի շլապատ սուրբ Գրիգորիս յիշատակ հոգւոյ իմայ. (Զ. Բ.)

«թվ.» Բագում կան հին գերեզմանաքարեր որ նոյնպէս անարձանագիր և եղածն էլ եղծեալ. մի բան որ շատ անյարմար թուեցաւ մեզ, այն է որ գիւղացիք նա մանաւանդ եկեղեցւոյ հենց կողքին դարսած և բարձրացրած են անորէ ահագին ամրոցները և խոտի գեղեր, այդ երկու բանն էլ թէ վասակար է եկեղեցւոյն և թէ անյարմար իբրև տան Աստուծոյ:

«Ա» Որ - Բայազիտի արուարձանների մինն էլ Վուլալի կամ զուլելի ասուած գիւղն է, որ Գեաւառի հարաւային կողմը բարձրագիր տեղւոյ մը վրայ հաստատուած է և տեսում է երեք և կէս վերստ ճանապարհ, հայ բնակիչներով: Ունի հասարակ քարերից շինուած մի եկեղեցի Ա. Աստուածածին անունով, որոյ տօնի շաբթուն չորեքշաբթի օրը շատ ուխտաւորներ է ունենում, թէ՛ Գեաւառից և թէ՛ մօտակայ գիւղերից, միայն կնանիք և աղջկունք գնում են առանց տղամարդի և խիստ մեծ բազմութիւն է լեբցվում:



ինչպէս ասացինք Աևանայ ափերում կան
շատ գիւղեր. բայց լճի վրայ նաւազնացու-
թեամբ ամբողջապէս պարապում են Կորատուզ-
ցիք և մասամբ Դշլարցիք:

Կաւակները պատրաստում են նոյն իոկ սոյն
գիւղացիք—այդ նաւակները ունին միայն մի
կայմ, որից քամի եղած ժամանակ կախում
են առագաստը, որով առանց թիավարելու լո-
ղում է նաւակը. տես № 342 Աևանայ ծով և
կղզի նկարից որ նաւակը դուրս է գալիս կղզուց:


Կորադուզը գտնվում է լճի հարաւային ա-
փում, Կոր-Բայազիտու արևելեան կողմը հինգ
վերստ հեռու, սորա դէմ ու դէմը լճի արևե-
լեան ափում գտնվում է Շորժա ոռու աւանը,
որ սորա և Կորադուզի մէջը եղած տարածու-
թիւնը ինն վերստ են հաշվում, որը կտրում
են նաւակները երեք ժամուայ ընթացքում:
Դրեթէ ամենայն օր կանոնաւորապէս մի նաւակ
դուրս է գալիս Կորադուզից դէպի Շորժա ապ-
րանքի ևն. տեղափոխութեան համար. նոյն-
պէս մեծաւ մասամբ Կորադուզիք են կա-
տարում մթերքների տեղափոխութիւնը լճի զա-
նազան կէտերում, ամբողջ գաւառում Կորա-
դուզիք յայտնի են, որպէս լճի վրայի նաւազնա-
ցութեան սիրահարներ, ջուրը, ինչպէս յայտնի է,

միշտ գրաւիչ է եղել մարդկանց համար, չնայած
այն բազմաթիւ դժբաղդ արկածներին, որ պա-
տահում են նրա վրայ:

Գեղամայ լճի ափերում կան չորս ոռուսաբնակ
գիւղեր, որոնք ի միջի այլոց ընդարձակ չափով
պարապում են սաղապահութեամբ, այդտեղ ձա-
նապարհորդելիս ուղևորը նկատում է սագերի
բազմաթիւ երամներ, որոնք շարան-շարան արա-
ծում են լճի եզերքում, կամ լողանում են լճի
մէջ, հսկողութեամբ մանուկների և կամ աղջիկ-
ների. Հայ գիւղերից միայն Կորադուզն է որ սա-
կաւ պահում է սագերի ջոկեր:

Կորադուզ—հին անունը՝ Խաչառուսց—բաւա-
կան մեծ հայաբնակ գիւղ է, բայց աղքատ. գիւղի
իսկ միջին կանգնած է մի վիթիւարի և կոփածոյ
բաւականաչափ մեծ քարերից շինած մօտ 1000
տարուայ եկեղեցի յանուն Ա. Կոտուածածնայ,
զոր Յովհաննու կաթուղիկոսի պատմութեանն
նայելով, Առաջան Դրիգոր իշխանի եղբայր Աահակ
Վիւնին է շինած—որոյ կամարները և առաստաղը
բոլորովին փլուած են, բայց տեղացիք սոյն աւե-
րակ եկեղեցւոյ բարձրութեան կիսիցը տախտակա-
մածով կարկատել են՝ որ ծառայում է ժողովը-
դին որպէս աղօթատեղի, բայց բոլորովին մութն
է, ծածկը՝ լուսամուտներից ցածր անենուն համար:

ФОТОГРАФІЯ



Худож.-лит. Р. ШАКВАЗЯНЦА ВЪ ТИФЛІСІ.



№ 253 Արդիոքէ Հռոմէական գերեզմանութիւններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՓՈՒԶԵԱՆՑ:

Խудож.-лит. Р. Шахbazянца въ Григоровъ.


Եկեղեցին ունի երկու պահարաններ արևելեան կողմի երկու անկիւններում։ մի մեծ պատարագամատոյց խորան և երկումն էլ սորա կողքերին։ յետին դասումն գտնվում են չորս փոքրիկ սեղաններ և։ արտաքին կողմը եկեղեցւոյ հարաւային պատի վրայ անխախտ մնում է մինչև հիմայ մի արևի կամ արեգակնային ժամացոյց, որ շատ ուղիղ ցոյց է տալիս օրուայ ժամերը, քանիցս անգամ փորձով տեսանք. դա մի քառորդ արշինաչափ երկաթէ ցողիկ է ամրացրած մի սալ քարի վրայ ուղղահայեաց, մի կիսաշրջանի կեղրոնում, որ բաժանուած է շառաւիզներով տասն և երկու մասի և ամեն մասում փորագրուած է հայկական տառերով ա. բ. մինչև ժ բ. = 1--12:

«Երադուզում մի ուխտատեղի ևս կայ. Յովհաննէս Գէորգեան անուն անձի տանը, ուր գրտնվում է մի քառաթև արծաթէ խաչ՝ խոշոր ակներով զարդարած, որ կոչվում է Ա. Կամն. Քրիստոսի խաչափայտի մասունքից իր մէջ կրելուն համար, և մի մագաղաթեայ փոքրիկ բայց սիրուն ձեռագիր արծաթապատ աւետարան, որոյ վերջերը ունի յիշատակարան այսպէս։

«Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականին հայոց Ռուգ. ամի «Երզըում քաղաքի ի յերկիրս Կարնոյ որ է ի գիւղս Թըւանձ և ի դուռն «տիրամայր սուրբ աստուածածնին և Գանձկա սուրբ Գէորգիս և ատենա «հաս սուրբ Սարգսի և այլս սրբոց. ի կաթուղիկոսութեան Էջմիածնիս «Տէր Դաւթի որ կարդաքդ յիշեցէք ողորմի ամեն. — Այս սրբու-

թեանց ուխտի են գալիս շատ շատերը, ամենայն օր շարան—շարան գալիս են թէ մօտակայ և թէ հեռաւոր տեղերից. այս սրբութիւնները տանը սենեակների մինում պահարանի մէջ դրուած են առաջը մի վարագոյր ծածկուած. իսկ դորանից դուրս տանը մէջ գուք տեսնում էք, որ տնային ամեն բան այդտեղ է կատարվում, թօնտիրը այդտեղ վառվում ու հացը թխվում, կերակուրը նոյնպէս, ինոցին այդտեղ — հարս ու տալ միմեանց ուշունց տալով կարագ են պատրաստում. այդ տեղ ուտում այդտեղ էլ ննջում, մի խօսքով ամենայն ինչ այդտեղ է պատրաստվում, եթէ մի որ և է բանի համար նկատողութիւն անենք, անպատրաստի պատասխան կստանանք, որն որ հաւատացնել էր ուզում այդ մասանց տէրը մեզ թէ, որպէս իրաւամբ կաթուղիկոսների կոնդակներով և թագաւորաց հրովարտակներով պահում է իւր տանը այս հնութիւնները և ոչ ոք իրաւոնք չի ունենալ վերցնելու դորանք, սակայն այդ կոնդակների կամ հրովարտակների գոնէ մինն չկարողացաւ մեղ ցոյց տալ, յետոյ խոստովանելով որ (բոլորը ունէի բայց այրուեցան) այդպէս ուխտաւորների շատ երթևեկութիւնը պատճառ է լինում տանտերին բաւականին արդիւնք ստանալու, որից չէ կարողանում կորզել այդ հնութիւնները հոգեւոր իշխանութիւնը։

ФОТОГРАФІЯ



Худож.-лит. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛНОВ.



ՀԱՅՈՒԹԿԻ ԽՈՎՈՎՈՅՆ ՁԵՐ ԸՆԴԱՐՄՈՒՅԻՆ

Պահանջար Ա. Փափազեան:

Խոճ-լիտ. Բ. Շահբայնց Յ. Թալիս.

Ա. ԼՈՒՍԱԽՈՐՉԻ ՎԱՆՔ ՆՈՐԱՏՈՒԶՈՒՄ № 254

Գիւղի վերել արևելեան կողմը մի բարձրադիր տեղւոյ վրայ գտնվում է հին լնդարձակ հանգըստարանը, բոլոր խաչաքարերն կանգնած են պատուանդանների վրայ, շատերն էլ պատուանդանից հանուած, ունի մէջը երկու թամբարան իշխանաց, զոր Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանն երկրորդ գրքի մէջ մատուններ է անուանում, որոյ վրանները արձանագրութիւններ կան, եղծեալ լինելուն դժբաղդաբար անկարելի եղաւ մեզ տեղեկանալ. իսկ միւսի դրան երկու կողքերին գտնուած արձանագրութիւնները դժուարաւ կարդացվում է այսպէս:

« Ես Սարգսի թռո Միրզատի որդի Ալեքսանո շինեցի սուրբ եկեղեցին.
« Թվ. ՌՃԿԴ. էր ես ատես գրեցի անարժանն»:


Այս գերեզմանատան համար է որ ասում է Ա. Գալալեանցը իւր ճանապարհորդութեան մէջ, «ի ահեռուստ երեխն որպէս զիսումքա հեծելազօրաց» կան զանազան թուականներին վերաբերեալ կանգնեցրած խաչաքարեր, որոց միոյն վրայ գրուածքը աստ կօրինակենք. « Ի՞նչ. թվ. ի ժամանակ բարեպաշտ իշխանց մերոց Զաքարէի և Խւանէի ես Միիթմար Փէճարենց որդի Դաւթի շնորհիւն Աստուծոյ և Հրամանաւ մեծին Խւանէի եղէ առաջնորդ մեծա-

« հոչակ գեաւղիս - նորատուաց - կամ եղև ինձ կանգնեալ զիսաւ փրկութեան ննջեցելոց իմոց. որք երկրպագէք. յիշեցէք ի տէր. »

« Ակարեցինք սոցանից մի քանիսները և վաճառում ենք ցանկացողների համար առանձին, որպէս զի միայն խաչաքարեր ցոյց տալով չձանձրացնենք մեր հայրենասէրներին:

« Աորադուզ գիւղից դէպի հարաւ մի վերստ հեռաւորութեամբ դաշտի մէջ կանգուն կենում է մի հին հիանալի րայց շատ փոքրիկ, գողտրիկ, անսիւն, սուր գմբեթաւոր եկեղեցի Ա. լուսաւորչի անունով, որի ներսը պատերի վրայ կան շատ արձանագրութիւններ: Փոքրիկ եկեղեցւոյն փոքրիկ մի բեմն իւր սեղանով երկու կողքերին սրբութեանց խորաններով դեռ անվասաս մնացած կան. բեմի երկու կողքերին մի մի փոքրիկ պահարաններ՝ փոքրիկ լուսամուտներով, մի վարագոյր են քաշ արած սեղանի երեաը, ուխտաւորներ գալիս՝ բաց են անում. լուսաւորչի երեք տօներին ժողովուրդը ուխտ է գալիս այստեղ և այն մեծ բազմութեամբ: Ուխտաւորների առածից օգտվում է Աորադուզի մի ոմն՝ Անդրակ անունով, պահպանութիւն է անում սա եկեղեցւոյն, մաքրում և կողպում:

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. Шахвазянца въ Тифлисѣ.



ЧОРОДИДЬ 40.00РВ. № 255

САКИИЧИР И. ФИФЕЦИВ.

ХУДОЖ.-ЛИТ. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛИСѢ.


Եյս Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ արևելեան կողմըն էլ կան գերեզմանաքարեր, խաչեր, աւերակ տանց հետքեր, խաչերի միոյն վրայ կար արձանագրութիւն դժուար ընթեռնլի. իսկ գերեզմանաքարերի մէջ կան երեք հոգեորականի գերեզմաններ. վրանին հովուական գաւազան նկարուած, ափսոս առանց արձանագրութեան են (Երեանցի Սիմէօն կախուղիկոսը այս վանքի համար Դատուած է ասում. տես Շահիսաթ. երկրորդ հատոր երես 239:

Նորագուղ գիւղի միջից անցնումէ Եյրի գետը, որ թափակում է նոյնպէս Աւանայ լիճը, այս գետի բերանում ձուկ որաալու տեղ է: Լճի վրայ կանոնաւոր ձկնորսութիւնը սկսվում է սեպտեմբերի 15ից և տեսում է մինչեւ գարունքի վերջը: Տրոնւող ձկներն են՝ Խշան, Ռմար, Գեղարքունի, Կարմիախայտ, Կողակ, Բախտակ, Բօճակ, Բեղլու, Շօռար, Կրակտուց, Չալի, Վղնջան: Բացի լիճից ձկնորսութիւն լինում է և գետաբերաններում ինչպէս սոյն՝ Նորագուղ գիւղի միջի գետումն էլ և մեծ յաջողութեամբ: Եյս վերջիններում գետը բաժանելով առուների, կապում են գետի բերանը քարով և տիղմով, ապա քիչ ժամանակից գետի քարով շրջելով, նրա սակաւաջուր հուներից ոչ

թէ՝ որսում են, այլ ուղղակի գրկալից հաւաքում են ձուկը և լցնում են կողովները մինչեւ անգամ ձեռներով, որովհետեւ այն աստիճան բազմացած է լինում. նաև մի այլ կերպ՝ Ռուբերուն, թարբ մի տեսակ որոգայթ է ուռենու ձիւղերից գործուած երկաչկանի մի քթոց, որոնցից զնում են գետի հոսանքի դէմք, որով ձկները թարբի առաջին բաժանմունքից երկրորդը անցնելիս, էլ անկարելի է լինում դուրս ելնել, սա ամենահեշտ միջոցն է, որ իւրաքանչիւր թարբից 200—250 ձուկ բռնվում է, երբորդ ձեւն է հարություն:

Շարպիկ են լինում այդ բանի մէջ սոյն՝ Նորագուղիք, գետը գիւղի հետ կապուած է գիւղացւոց շինած մի սիրուն կամուրջով, առանց վարպետի և առանց Ճարտարապետի: Ջրի վրայ արշին ու կէս բարձրութեան պատ են բարձրացրած, կիրի, տիղմի և կամ ցեխի տեղակ մի կարգ քարերի վրայ մի շարք ծառի հաստ ձիւղեր դարսել են և այդպիսով չորս աչքի են բաժանած կամուրջը. և այս աչքերի վրայ ձգած են հաստ ծառեր, որով անցնվում է անվտանգ, այդ նկարը մենք այստեղ գրքի մէջ զնում ենք ոչ թէ իբրև հնութիւն, այլ իբրև աչքի ընկնելու մի բան:

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. Шахbazянца въ Тифлисѣ.



№ 256 Ա. ԳԵՂՐՈՒՄ ՄԵՆԱՊԱՆ. ՎԱՀԱՆԱԿՈՅ ԳԻՒԳՈՒՄ. (ԴԵՂԱՐՔՈՒՅԹՈՒՄ)

ՊՈՒՍԱՆԿԱՐ Ա. ՓԱՓԱԿԵԱՆ:

ԽԱՋ. - ЛИТ. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛИСВ.

Ասր – Բայտազիդից նոյնպէս գէպի հարաւային կողմ
ծալի եզերքում գտնվում է ուղիղ 20 վերսափ վրայ
Երանոս Հայտաբնակ դիւզը, որ ճանապարհին երեւում են երկու
շատ հին աւերակ գիւղատեղեր իրենց ընդարձակ գերեզմանա-
տնով, մի կիս ուեր շինութեամբ ու բաւական խոչաքարերով,
առանց արձանագրութեան, թուրքերը սորան Դուրու – զարա-
պա են անուանում :

Ճանապարհս այս սիրուն է, ծաղկաւետ արօտատեղիներով և արտերով զարդարուած լինելուն, ծովի մեղմիկ քամին նոյն-պէս կենդանութիւն է տալիս վաստակած անձւորականին, կիզիչ արեգակնային ճառագայթները կարծէք այլ ևս ազգեցութիւն չեն անում մարդուս, մի կողմում ոչխարների, խո-շանց հօտերն են արտածում, մի այլ տեղ գիւղացիք հողին պահ-տուած իւրեանց քրոանց պառուղն են քաղում, տներնին ամ-բողջ տարի սոված չի պաշելու համար։ Սոյն երանոս գիւղում չկայ ոչ ինչ հնութիւն, բայց ի ամենուրեք գտանուող խաչտքա-րերից։ Սոյն գիւղից երեք վերստ հեռու գտնվում է գարձեալ-հայաբնակ 75 տուն ժողովրդով Հաթամ—խան գիւղը, ծառաս-տանով և պարտեղներով զարդարուած, սա ևս հնութեանց վերաբերութեամբ նման է Երանոս գիւղին, ուրեմն շարունա-կում ենք մեր ճանապարհը ոորանից չորս վերստ հեռու գտնված Վալի—Աղալու կոչուած գիւղը, որոյ բնակիչներն բոլորը հայ են 125 տուն։

Այս գիւղի արեմտեան կողմը բարձրադիր կրային տեղւոյ մը վրայ կայ հոյակապ մի շինութիւն, բայց աւերակ, որի արեմտեան կողմը եկեղեցուց բաժան՝ կայ երեք սիւնազարդ կամարներ, երեք փոքրիկ քառանկիւնի լուսամնւաներով, մի այն թէ առանց առաստաղի և արեելեան պատը կիսից աւելին քանդուած է, չէ խմացվում թէ ի՞նչ է. ընդարձակ մի սրահ և բաժան բոլորովին եկեղեցուց, և այն փոքրիկ քառանկիւնի լուսամնւաներն էլ միայն հարաւային կողմի երեսումն են, ամեն լուսամնւա սիւնազարդ կամարներով բաժանուած, ուղեցանք կարծել և իւրաքանչիւր կամար մի մի սենեակ համարել, բայց բաժանմունքներ չերեացին և ոչ սոցա հիմքերը: Ո՞է սոցա և թէ եկեղեցւոյ շինութիւնները կազմուած էին սե սրբատաշ քարերից և շատ էլ հաստատուն: Եկեղեցւոյն սեղանի կամորի կէսը և հիւսիսային կողմի մի պահարանը մեացած է. շինութեան մնացեալ մասերը քանդուած են, քանիզ ուած ու թափուած քարերի քանակութիւնը, չէ կարող ծածկել քանդուած տեղերը, երեք վերյուել են—ուղափափիւել են, անշուշտ նոյն գիւղացիք:

Մեր ճանապարհորդութեան միջոցին թէ թուրքի և թէ
հայի գիւղերում գտնուած հայոց սրբաճմշիկ աւերակները
տեսնելիս նկատեցինք, որ երբեմն տեղիս թուրքերը աւելի
ազնուաբար են վարվում հայի հնութեանց հետ քան թէ հա-
յերը. գոնէ թիւրք գիւղերում գտնուած աւերակների վլա-

տակները հաւաքուելու լինին, կարելի կլինին նորոգութեան բաւականայ, բայց հայ գիւղերինը ոչ, թուրքերը միայն շինութեանց անտէրութիւնիցը օգտուելով տաւար են պահում մէջը, յարդ են լեցնում, գոմատեղ են շինում ևլն. բայց ոչ քանդում հայերիս նման, քանդել ու այլ շինութեանց գործ գնել նշանակում է հիմնայատակ անել այն սրբութիւնները, որ նախնիք կառուցել են, և ով գիտէ ինչ գիտարութիւններով: Այս քարոզելու ու յետ կասեցնելու համար նշանակուած անձնուորութիւնք անգամ իրենք են պատճառ և օրինակ լինում ժողովրդի արած սիսալ քայլերին, թուրք գիւղերի շատերը այժմ վախեցած լինելնուն յետ են կայել եկեղեցւոյ մէջ մինչեւ անգամ կենդանիներ պահելուց, ինչպէս մեզ հաւատացնում էին թուրքերը իրենք, որ կենդանիներ պահելնուն համար այն ֆիք (հին սուրբի) տան մէջ, կենդանիներին խելագարութիւն է պատահել, մինչեւ 5—10ը մասաղ չեն արել՝ չեն ազատուել միւսները և այժմ գորտ համար էլ մաքուր են պահում և կամ այլ ևս տաւար չեն պահում մէջը. ասածնուս իբրև ապացոյց ձանապարհորդը կտեսնէ անցնելիս Այրի—վանիքը որ թուրք գիւղումն է. մաքուր է պահուած, քարերի թափուածները մնացած. Բաշ—քենո գեղարքունիքում, թուրքի գիւղ արդէն բոլորավին աւեր՝ միայն քարակայտ մ՝ է որ երեսում, բայց թափուածները բոլորը կան: Թէ կուզ ուզում էք անցէք Վայոց Ճորի մէջ գոմուածներին, օրինակ Ամազուն, Թանահատին, Այսասին, Վօշա վանքերը, Ալագեազը, Յախար քարը, Գիւնեյն ևլն. բոլորը թուրքի գիւղեր են և չերեսում մի այդպիսի բան ինչ որ տեսնում էինք հայի գիւղերում, ճշմարիտ է, ինչպէս ասացինք տառէրութիւնից օգտովում են կամ ամբար են շինում մէջը կամ բակի


խոտերը քաղում և կամ ուրիշ բան ցանում՝ հողիցը նոյնպէս օգտվում: Եթէ ամենայն ինչ տեսանելին գրել ուղենայինք ընդգարձակ և մեծ գրքեր կազմել հարկ կլիներ, որ և այդ մեր նպատակից գուրս է, մերը այն է որ համառօտ տեղեկութեամբ բաւականութիւն տանք հետաքրքիրներին:

Սոյն մենաստանի բոլորափիքը նոյնպէս խաչաքարեր և գերեզմաններ կան, խաչաքարերի միոյն վրայ գրուած է. «Սուրբ խաչը բարեխօս է Վարդանին թվ. (Զ.Վ.) 1541 փրկէ» գերեզմանաքարի միոյն վրայ էլ նկարուած է, մի տուոյգ երիտասարդի նկար, ձեռքին ունելով մի մուրճ, առաջը դրուած է քութան, որ ինչպէս երեսում է, զինումն է, իսկ սորտ կողքին գրուած է, (այս է հանգիստ էլզին):

Սոյն վանքի համար ինչպէս յիշեցինք Ս. Պետրոսի մենաստան, որն որ Մարիամ տիկնոջ կաւուցածն է, սիւնեաց գամբուռն վաստի իշխանի ամսւսինը. Ս. Օբելեան իւր հին հայաստան գրիքի մէջ սորտ մասին գրում է թէ «սոյն Մարիամ շինէ զմեծապահ եկեղեցին ի Շողուագայ յանուն սրբոյ առաքելցն Պետրոսի.... ևլն. (շարունակում է...) «և հաստատէ արձան անջինջ յիշատակի «առաջի Գէորգ կաթուղիկոսի. և Յովանիսի սիւնեաց եպիսկոպոսի և «Գագկայ սիւնեաց տեառն»:

Ուրեմն եկեղեցւոյ շինութիւնը լինում է, Գէորգ Բ. Կաթուղիկոսի օրով բայց ճիշտ ո՞ր թուրին յայտնի չէ, այլ միայն այսքան համատիալի է, որ Զաքարիա առաջինին յաջորդում է Գէորգ Բ. Կաթուղիկոսը 876 թւին յունվարի 13ին լնարկում և վաղձանում է 885 թւին, վարելով ինն տարի կաթուղիկոսութիւն. ուրեմն մօտաւորապէս 1013 տարուայ կառուցած մի շինութիւն է:

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.



№ 257 ԳՈՂՈՎ ԱԹԱՔԵԼՈՅ ՎԱՆ. ԾԱԿ-ՔԱՐ ԳԻՒՂԱՐՄ. (ԳԵՂԱՐՔՈՒՆԻՈՆ)

Պահսպանութեան Մատուցութեան Տաճար

Պօնս ԱՐԱՔԵԼՈՅ ՎԱՆՔ № 257

Wauwauh Wauwauh



ուրբ Պետրոսի Մենաստանից յետ գառնալով փոքրիկ
մի ըլտուրի ցածրը դէպի արեելահարաւ, Ծակ -քարի
և Վալի - Սաղալու գիւղերի միջին, ընդարձակ դաշտի վրայ կտ-
ռուցած կայ Հասարակ քարերով և փոքրիկ գմրեթով մի վաճք,
որն որ Պօղոս առաքելոյ անուտան է նուիրած, սա նայնպէս չու-
նի արձանագրութիւն, որոյ Համար բուն շինութեան թուակա-
նը չէ կարելի իմանալ, այլ միայն կաթուղիկէի արտագին արեե-
լեան վերին կողմը արձանագրութիւն ունի նորոգութեանը մա-
սին Դաւիթ եպիսկոպոսի ձեռամբ, որն որ ի ստորև դնում ենք:

Եկեղեցւոյս ձեւը քառանկիւնի է բայց ոչ համահաւասար չտփով, երկարութիւնը կլինի 22. և լայնութիւնը 18 տրշին. ունի փոքրիկ մի դուռ արևմտեան կողմից շինութեան անկեան մօտ. ներս մոտելիս փոքրիկ մի նախասենեակ է ներկայանում և ոս պէտք է լիդունել որպէս գաւիթ, որոյ հիւսիսային կողմ գտնուած գուռը տանումէ եկեղեցին, որ մութնէ, որովհետեւ ողջ շինութիւնը միայն չորս փոքրիկ լուսամուաներ ունի: Ներքին կողմն էլ դարձեալ նոյն հասարակ քարերով է կազմուած. ներսը խաչաձեւ է և անսիւն, մի մեծ և չորս փոքր սեղաններ ունի. բեմի քայքայուած, որոյ համար վեմ քարն էլ տեղը չէ:

Գմբեթի արտաքին կողմի տրեմուեան և հիւսիսային կողմերը
քանդուած են կիսով չափ, առաստաղի քարերը բոլորովին
թափուած։ Անձրեի ջուրը վերի տանիքի հողը ծծելով շուտով
կործանելու է եկեղեցւոյ գլուխն։ և պիտի մնան մի ոյն եկե-
ղեցւոյ չորս պատերը։

Եկեղեցւոյ արեւելքան կողմը կահ գերեզմաններ և խաչքար
թեր, որոյ մինին վրայ գրուած է. « Կենաց խաչս Պուկաս եպիսկոպո-
սին թվ. Զ. (1501) մի այլ խաչքարի վրայ էլ, պարզ կարդաց-
« սին թվ. Զ. (1611) մի այլ խաչքարի վրայ է, Պատիթ եպիսկոպոսին թվ. Պ. (1611)
« վում է, խաչս բարեխօս է Պատիթ եպիսկոպոսին թվ. Պ. « Ճշեցէք
« իսկ սուրա ներքեւ մի և նոյն խաչի վրայ գրած է « Ճշեցէք

« ի Քրիստոս Դաւիթ՝ Եպիսկոպոս որ այս նորոգեաց զեկեղեցիս »
« մի ուրիշ խաչքարի վրայ առանց թուականի « սուրբ Խաչը բա-
նեանու է Դաւիթ պէկին »:


Վերոյիշեալ կաթուզիկէի արևելեան կողմում՝ գտնուած սրձանագրութիւնը, որ շատ գիտարութեամբ պէտք է բարձրանալ և գիտուար էլ բնթեանելի որ է.

« Կամաւն աստուծոյ նորոգեցաւ սուրբ Եկեղեցիս ի թվին ՈԿ. կա-
թողիկոսութեան տէր Մելիքսէթին ի թագաւորութեան Շահ-ապասխին
ի ղանութեան Ամիր գունայ Խանին և մելիքութեան տէր Վարդանին, ես
Դաւիթ առաջնորդ վանից նոր... (ջնջութած է պէտք է լինի երեխ
նորոգեցի) » : Սոյն արձանագրութիւնը Ա. Զալալեանցի գրքի
մոտ, « ինեւո ն Համար այս տեղ նշանակեցինք նոյնութեամբ :

Սոյն վաճառքը շատ յետոյ է շինուած Ա. Պետրոսի մենաստանի՝
որոյ մասին սխալվում է Ա. Զալալեանցը իւր ճանապարհոր-
դութեան մէջ, որովհետեւ Մելքիսէթէքի կաթողիկոսութիւնը
1605—1633 թւականներին է լինում ինչպէս Դավիթիցի Աւա-
քել պատմագրի գրգումն էլ երեսում է երես 423. որն որ ար-
ձանագրութեան թուականներն էլ ցոյց է տալիս։ Սակայն այս
ուղղ միայն մի բան՝ որ մեզ զարմացնում էր, այն է, որ մենք
ուստանք եկեղեցւոյ արեւելեան կողմնում մի խաչաքար և որի
զատուանդանի առաջի գտնուած քարիցը նման է աւելի գե-
ղատուանդանի, սոյն խաչաքարի վրայ յիշուած էր նոյն Դաւիթ
եպիսկոպոսի անունը, այժմ՝ կաթուղիելի վրայ գտնուած ար-
ձանագրութեան մէջ էլ կրկին կարուցցինք, թւականներն էլ
ճիշտ մի և նոյն թւին, թէ խաչաքարի և թէ արձանագրու-

թեան մէջ տեսնում ենք ԱԿ. թւերը, արգեօք մի և սոյս առ-
ւիթ եպիսկոպոսն է. որ և մի և նոյն նորոգութեան տարին
էլ վախճանուել է. մեր կառկածը փառատելու համար կրկին
զննեցինք և համեմատեցինք մի և նոյնը դուրս եկաւ, ինչ որ
վերև նշանակել ենք:

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛИСѢ.



№ 258 ზე ქართული მოწვევა (მეცნიერებები)

ლესის უ. ფიფიძეს:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.



աշտից այսինքն Ա. Պօղոս Եռաքելոյ
վանքից դէպի հարաւ կայ մի գիւղ հայ
բնակիչներով Դապա—քենտ անունով,
որ ունի մի եկեղեցի:

Գիւղի վերին ծայրում կայ մի Տին
աւերակ, վանք են կոչում, որ փոքրիկ մի մա-
տուռ է. մի գմբեթով նոյնպէս հասարակ քարե-
րից շինուած, արձանազրութիւն էլ չունի ոչ մի
տեղ, որ հետաքրքրուողն իմանայ թէ ի՞նչ է, Տին
վանք է թէ գիւղական մի եկեղեցի, թէև կողքին
շատ խաչաքարեր կան՝ նոյնպէս առանց արձանա-
զրութեան:

Այնանման մի մատուռ էլ կայ Վեսեճուք գիւ-
ղում պառուայ վանք անունով:

Այրանց ևս նկատեցինք բայց գըքիս մէջ չդրինք
նշանաւոր բան չլինելուն համար:

Վակայն աւելորդ չհամարեցինք այս երկրորդ
գըքիս մէջ երկու պատկեր աւելացնել, որոց մինն
է Շակ-քարի բնական կամուրջը, որ բնութեան
մի հրաշալիք կարելիք է համարել, տեսէք, չորս
հարիւր քայլաչափի վրայ երկար միապաղաղ ա-


պառաժ քար, որոյ ներքեւից գետն է անցնում,
սայ Ե. Ջրի գետի մի մասն է, որ նոյնպէս գնում է
Աւանայ լիճը թափվում:

Չուրը ծակել է ժայռն և կաղմել մի քանի
կամարներ, այնպէս որ ջուրի մեծ հոսանք ունեցած
կողմը մեծ կամար է բացուել իսկ փոքրիկ քա-
նակութեամբ վազող տեղերը փոքրիկ կամարներ,
ապառաժի վրայով անվտանգ կարելի է երթևեկել
մի ծայրից միւսը ուր վերջանում ժայռը:

Այրանից վերև քիչ բարձրում գտնվում է
Շակ-քար գիւղը երկու քահանայով և 40 տուն
հայ ժողովրդով, որ պարապում են բացառա-
պէս հողագործութեամբ և անասնապահութեամբ:
Գիւղի շուրջն իւրեանց տնային բաջարանոց-
ներն են:

Գիւղը ծովից չեռու է երեք վերստ, լնկնում
է Վալի-աղալու ի, Դեօլ ի, Դազա-քենտ ի,
և ներքին ու վերին Ետիեաման գիւղերի մէջ տեղ,
այստեղ չկայ ոչ մի բան հնութեան վերաբերեալ
բաց ի այս ապառաժ կամուրջից, որոյ նկարն իբ-
րազ մի հրաշալիք կարելիք է համարել, դրինք մեր գըքում:

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. ШАХБАЗЯНЦА ВЪ ТИФЛИСѢ.



№ 259. ЧАСТЬ ПЕРВЫЙ РИКУ ФОТОГРАФИЯ
С. ФИФИДЕЦЕВ:

ЛЮСИЧИР С. ФИФИДЕЦЕВ:

Худож.-лит. Р. Шахбазяна въ Тифлисъ.



ուրս գալով Շահկ-քար զիւղից թող-
նելով մեր ձախ կողմը Գեօլ ասուած
հայաբնակ զիւղը, ճանապարհը մեզ
տանում է ներքին Յափեաման զիւղը,
որ ոչ մի հնութիւն չունի բացի մի
քանի խաչաքարերից, որ վերին Յափեամանի ճա-
նապարհի վրայ տեղ տեղ կանգնեցրած են:

Երեք վերստ հեռու վերին Յափեաման զիւղն է.
որ ի հնումն կոթա զիւղ էր անուանվում. ուր
Օրբելեանցի և Գրիգոր Սաղիստրոսի զրութեանց
նայելով Առաքան անուանեալ զարուն Ա ասակայ
որդի Գրիգոր իշխանի բնակութեան զիւղն է Ե-
ղած. զիւղի ծայրին բարձրադիր տեղույ մը վրայ
կառուցած կայ վիթիւարի և հոյակապ բազմասրահ
մի եկեղեցի կոթա վանք անունով. սև ու կարմիր
մաքուր քարերից շինուած, շուրջը բնդարձակ սե-
նեակներով և գերեզմանատներով, բայց բոլորը
կործանուած, ոչ այն սենեակներն կան ուր մի
ժամանակ վանքիս մաքանութիւնը բնակվում էր,
և ոչ այն ժամասացութիւնը, որ կատարվում է

եղել այս հոյակապ ու բարձրադիր. Ա. Տաճարի
մէջ:

Եկեղեցին համարեայ քառանկիւնի է 40 արշին
լայնութեամբ և երկարութեամբ, իսկ ներքին
կողմն է բոլորակի խաչածե, չորս անկիւններում
ունի մի մի պահարաններ, մի մեծ սեղան և չորս
առանձին փոքրիկ սեղաններ. տաճարի հարաւային
կողմից սկսեալ մինչ արևմտեան կողմի պատերը
մինչև կէս բարձրութեան քանդուած են, եկեղե-
ցւոյ առաստաղը և գմբեթը բոլորովին փուլ եկած
և թափուած եկեղեցւոյ յատակը:

Ինչպէս վերև յիշեցինք եկեղեցւոյ շուրջը ըն-
դարձակ հանգստարանն է խաչաքարերով զար-
դարուած, սակայն ըստ մեծի մասին կոտրաս-
ուած և շատերն էլ իւրեանց պատուանդանիցը
հանուած. խաչաքարերը առ հասարակ ամրացրած
են մի մի քարեայ պատուանդանների վրայ, որ
գրքիս № 262 խաչերից կերեւան:

Ինչպէս մեզ հասկացրին, սոցանից շատերը յոյն
քարտաշները վերցնում տանում են եղել գործ

ածելու, սոցա մէջ կար եպիսկոպոսական թագով և հովուական գաւազանաւ գերեզմանաքար, մի այլ գերեզմանաքարի վրայ փուրվար, գաւազան և սաղաւարտ են փոքրագրած:

Այս վանքն տեղացիք անուանում են Կոթայքանք:


Ա. Զալալեանցի ճանապարհորդութեան մէջն էլ ասած է, որ այս վանքը Գափուո վասակայ որդի Գրիգոր Սուփան իշխանի շինածն է, և գիւղի միջին ժայռերի ստորոտում սորա գերեզմանն էլ կայ վրան խաչաքար կանգնեցրած:

Տեղւոյն ծերունի թաղէոս քահանայի ասելով

սորանից 7—8 տարի առաջ Տեղեղից խաչաքարի առաջ գտնուած պատուանդանը և գերեզմանաքարը փուլ գալով միջից ուկրոտիքն դուրս են թափուել, որ և ուրիշ մի տեղ փոխադրելով թաղում են, սոյն խաչն էլ իւր գեղեցիկ քանդակագործութեամբ արժանի համարեցինք նկարելու հնասէրների համար, որ ինչպէս սոյն գրքիս մէջ № 260 կերևայ:

Սորանից մօտ քառասուն քայլ Տեռու գտնվում է մի գերեզմանաքար էլ վրան գրուած «Կամաւ աստուծոյ ես փաշա բէկս կենակից մելիք աստուածարովին եկեալ կանդնեցի սուրբ Խաչ բարեխօս եղբորն իմ Ալեքսանին թվ. ՌԱՄԱ. (1701 գրէ):»

ФОТОГРАФІЯ



Худож.-Літ. Р. Шахбазянца въ Гіфлінов.



№ 261 ԳԵՐԵԶՄԱՆՔԱՐԵ ՎԵՐԻ ՂԱՐԱԼՈՒ ԴԻԽՈՒԹ. (ԳԵՂԱՐՔՈՒԹՅՈՒՆ)

ՏՈՒՍԱԿԱՐ Մ. ՓԱՓԱՀԵԱՑ:

Խոճ. - Лит. Р. Шахбазянца въ Тифлис.

ՀԱՆԳՍՏԱՐԱՆ ՎԵՐԻՆ ՂԱՐԱՆԼՈՒԽ ԳԻՒՂԻ № 261

 ոթա գիւղից կամ վերին Ատիեամանից հինգ վերստ դարձեալ դէպի հարաւ վերին Ղարանլուխ գիւղն է, այրիճա սարերի լանջի վրայ տեղաւորուած, ուր օդը առողջարար և ջուրն բարեհամ է, կանաչազարդ պարտէղներով, բնակիչներն բոլորն էլ հայ են, պարապում են հողագործութեամբ և անասնապահութեամբ, գիւղի միջին ունին և վայելուչ եկեղեցի հին ժամանակից, որն որ 1873 թուականներին նորոգած են և ունի հարաւային դրան վրայ սոյն արձանագրութիւնը:

Թուին ԹՅԻԲ.

Կամաւն Աստուծոյ նորոգեցին
Ս. Գէորգ Եկեղեցին

Տեառն Գէորգ Կաթուղիկոսին
Անարքան տէր Սուքիասին
Վարպետ Մանուկ Տիկիսեցին:


Եկեղեցւոյ շուրջը ընդարձակ հանգստարանն է, որոյ մէջ շատ հին գերեզմանաքարեր գտնվում են, վրանին զանազան տեսակ նկարներ են փորագրած, որպիսիք ուրիշ տեղերում հաղուագիւտ են: Առանցից մի քանիսը ընդհանուր տեսարանի ձևով նկարեցինք № 261 նկարից կերեին, որ գերեզմանաքարի վրայ փորագրած են հարսանեկան խնձոյք, նուագածուն, գինու շիշ—նոյն ժամանակուայ ձեխ, ձիաւորուած հարսը թագը գլխին, փեսայն նոյնպէս առաջից ափսէով ծաղկէ փունջ և մըքեր ձեռին տանում է. մի այլ գերեզմանագրի վրայ փորագրուած է պատերազմ, միմեանց

հետ կովում են երկու ձիաւորներ. մի ուրիշ վրայ քութան վարողներ. ևն. ևն:

Այս գերեզմանատան մէջ գտնվում էր շատ հիանալի սիրուն քանդակագործութեամբ մի խաչաքար, որ արժանի էր նկարելու, սա ևս զետեղում ենք գրքիս մէջ միացնելով Գրիգոր Առաքան իշխանի գերեզմանախաչի հետ կազմելով մի պատկեր № 262 որոյ վերայ պարզ կարդացվում է թուականը և ում պատկանած լինելը. այսպէս, «Սուրբ Խաչ բարեխօս է Զաքարին և կենակց-շարունակութիւնը Խաչի հարաւային կողմումն է թվ. ՌՃՖԴ. (1665):»:

Այս գիւղը մեր ճանապարհը երկուսի է բաժանում և մտածեցնել տալիս, այն է՝ ծովեզերքով ամբողջ գեղարքունիքում գտնուած հնութիւնները վերջացնել թէ անցնել սարերը Այսոց ձորում եղածները նկարել, յիրաւի բոլորն էլ արժանաւոր են, բայց և այնպէս մենք առ այժմ անցնենք դէպի Այսոց ձորի մեր նախնեաց հին հրաշալիքները, սրտաձմլիկ աւերակներն բանասէր հայրենասերներիս ցոյց տալու: Քանի որ դեռ ևս ճանապարհներն էլ թէ ցուրտից և թէ անմարդաբնակութիւնից չէ փակուած, թողնելով գեղարքունիքը մեր վերադարձին, որովհետեւ Այրիճա ասուած ճանապարհին միայն տարուայ յունիս ամսոյ վերջերից մինչև օգոստոսի կիսերքումը բնակութիւններ կան: քարի վրայ փորագրուած է պատերազմ, միմեանց

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. ШАХБЕЗЯНЦА ВЪ ТИФЛИСѢ.




№ 262 ԽԱՂԱՔՈՐ. (ԴԵՎԱՐԳՈՒԽԻՇՎԻ)



№ 260 ԳԵՐԵԶՄԱՆՈՐ ՍՈԲՈՒ ԳՐԵԳՈՐ ԻՇԽԱՆ

ФОТОГРАФІЯ



Худож.-Лит. Р. ШАХБАЗЯНЦА въ Тифлисе.



№ 263 АЛЫСОКСЫНДАР ҮЗҮ ОРДА ОЗГЕРВИЗДІР. (ЖЕЦКЕСКОУЛДЫН)

Еркүнчікір и. Фифиозеев.

Худож.-лит. Р. Шахбазянц въ Тифлисъ.

Աւելորդ չի լինիլ եթէ համառօտ կերպիւ երկու խօսք աւելացնենք այտեղ Այրիճայի մասին. Այրիճան արթատկանների համար մի դրախտ է, մեծ բաղդաւորութիւն է համարվում, ով ունի այդ տեղ արօտատեղ:

Ամբողջ գաւառում միայն Այրիճան է, որ ամառը կատարելապէս լիքն է լինում անասնապահներով, Այրիճան բոնում է Աղդաղի, Խըիջիլարի, Դիտվանքի, Աբդուլ-Հասարի ստորոտները և մեծ ու փոքր այրի գետակների հիանալի, չըտեսնուած, հարթ հաւասար հովիտները. կան այդ տեղ երեք մեծ աղբեւրներ՝ երկաթածծմբային ջրի և մի մեծ աղբեւր՝ բնական զելտերեան ջրի, որ կոչվում են տեղականներից մեծ և փոքր Խոպու-է-լալ:

Այս կողմերը հին հայոց դարերում կոչվում էր Խոլոց գաւառ, այսինքն քարանձաւների, կարանների գաւառ, որովհետեւ այդ տեղ լիքն է հրաբխային այրերով, որ և հիմա իսկ թուրքերը սրան բխային այրերով, որ և հիմա իսկ թուրքերը սրան անուանում են Խոլոցիանայ. որ նշանակում է նոյնը. այսինքն է՝ այրերով լի տեղ. հին անունը միայն կրում է գետը, որ ասվում է Այրի-Հայ-գետ, որից բերնէ բերան աղաւաղուելով դուրս է եկել

(այրիճա) բառը, որ է մի լնոցհանուր անուն գետի երկու կողմը տարածուած մեծաքանակ լնուիր արօտատեղերի: Այրիճան թուրքերի և քուրդերի ձեռին է, որ ամառ՝ յունիսի վերջերից սկսած մինչև օդոստուի վերջն զալիս են մի տեսակ վըրաններ սարքում, որ օրա, ալաչուխ, դագեա կամ չաղը են անուանում. բնակվում են տնով և իւրեանց անասուններով այս տեղ, բայց մի նշանաւոր մասն էլ գրաւած են Դաւալուեցի հայերը:

Կան նաև ուրիշ արօտատեղիք որպիսիք են Գեօղալդարայ, Քէյթի, Խանըխ ևն. որ թէն այստեղերանք էլ վրաններ հաստատվում են, բայց ամենամեծ հոչակը ամբողջ գաւառում վայելում է այրիճան, ուր Դարաբաղից, Շարուրից, Երեւանից, Խրասխ գետի ափերից ևն. տեղերից գալիս են մօտ 8—10 հազար ընտանիք: Խորաքանչիւր աղգութեան վրանները մի մի տեսակի են, զոր օրինակ քրդերի վրանները կոչվում են էն. գետին ցցած մի քանի ձողերի վրայ փոռում են մի մեծ այծի մաղեց խոշոր գործած շալ, որի ծայրերը պարաններով կապում են գետնում ամրացրած ցցերին և շրջապատում են եղեգնի կամ բարակ ճիպոտներ կազմած ցանցապատով: Տաք ե-

զանակին քրդերի վրաններում շատ ախորժելի է, իսկ ցուրտ, անձրև ժամանակ անտանելի: Աւելի յարմար են ցրտից ու անձրևից ապահովուած՝ թուրքի կամ հայերի վրանները. որոնց մեծը և հաստատը ալաջուս կոչուածն է և շինուած է այսպէս, գետնին խփում են մի բաւական հաստ սիւն, դրանից 4—6 արշին հեռաւորութիւնով շուրջ տնկոտում են կամարաձև ձողեր, որոնց վերի ծայրերը բերում ամրացնում են սիւնի ծայրին գտնուած փայտի հաստ շրջանակին, ապա այդ շառափակներից շինուած կիսագունդը ծածկում են հաստ թաղեքով, ներքեւից շրջապատում են եղեգնի ցանցապատով, կապկապում պնդացնում են պարաններով ու մի կողմից մուտքի տեղ են

թողնում, սոցանից մի քանիսները նկարեցինք և
որոյ մինն էլ սոյն գրքիս մէջ դետեղում ենք,
զուարձալի և շատ շատերի Համար չտեսնուած
բան լինելուն Համար:

Վերջացնում ենք երկրորդ գիրքը այսքան նկար բաւական համարելով, յոյս դնելով աղքի ձեռնհաս և հայրենասերների աչակցութեանը, խոստանում ենք, որ շուտով Գ. գիրքը դուրս հանենք աւելի մաքուր և աւելի նկարներով, ինչպէս ասել էինք Ա. գրքի մէջ, որ բաւականին հաւաքածունինք և հաւաքելու ենք:

Այժմ յայտնում ենք, որ համարեայ Ուսասատանի հայաստանում գտնուածների մեծ մասը վերջացած է և ունինք արդէն պատրաստ:



KC-2001

2013



